ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 3
ՀՏՋՀ-ԽԲՄ-ԾՁԲ-2024/28 ծածկագրով
գնման ընթացակարգի հայտերի գնահատման նիստի

Վայրը՝ **ք.Երևան** սկիզբ **10 սեպտեմբերի 2024թ.**
ժամը՝ 12:00
ավարտ **12 սեպտեմբերի 2024թ.**
ժամը՝ 12:00

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (գտնվելու վայր՝ ՀՀ ք. Երևան Կ. Ուլնեցի 31 հասցե, ՀՎՀՀ 0084644, էլեկտրոնային փոստ՝ atdf@atdf.am) գործադիր տնօրենի **«12» օգոստոս 2024թ. թիվ 1457-Ա** հրամանով ստեղծված գնահատող հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) **«ՀՀ Լոռու մարզի Կաթնաղբյուր բնակավայրի կրթահամալիրի կառուցում», «ՀՀ Սյունիքի մարզի Վերին Խոտանան բնակավայրի կրթահամալիրի կառուցում», «ՀՀ Սյունիքի մարզի Տեղ համայնքի թիվ 2 կրթահամալիրի կառուցում» ծրագրերի շինարարական աշխատանքների ընթացքում տեխնիկական հսկողության ծառայությունների** ձեռքբերման նպատակով **ՀՏՋՀ-ԽԲՄ-ԾՁԲ-2024/28** ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) հայտերի գնահատման նիստին (այսուհետ՝ նիստ) մասնակցում է հետևյալ կազմով՝

Աշոտ Խաչատրյան ՝ Հանձնաժողովի նախագահ
Սամվել Պողոսյան ՝ Հանձնաժողովի գնահատող անդամ /բացակա անդամ/
Գայանե Քարիմյան ՝ Հանձնաժողովի գնահատող անդամ
Անահիտ Թադևոսյան ՝ Հանձնաժողովի գնահատող անդամ
Լուսինե Ղազարյան ՝ Հանձնաժողովի գնահատող անդամ
Վարդինե Իսահակյան ՝ Հանձնաժողովի բացող անդամ /բացակա անդամ/
Սոնա Կարապետյան ՝ Հանձնաժողովի բացող անդամ

Հանձնաժողովը, հիմքում ունենալով Ընթացակարգի բացման նիստի արձանագրությունը և ներկայացված փաստաթղթերը, արձանագրեց, որ՝

1. Տեղեկություններ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխանելու, յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

Հանձնաժողովն արձանագրեց, որ

1.1 «ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Մասնակից) կողմից ներկայացված հայտի ապահովման իսկությունը ստուգելու նպատակով՝ Բանկային երաշխիքի իսկությունը պարզելու համար ուղարկված հարցման վերաբերյալ պատասխանը ստացվել է բավարար.

1.2 **«ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված փաստաթղթերում առկա են անհամապատասխանություններ.

*Հրավերով սահմանված «Ծառայության մատուցման մեթոդաբանություն (SԱ2)» 8-րդ կետի համար անհրաժեշտ է ներկայացնել նաև գնման առարկայի առանձին տեսակի աշխատանքների և կոնստրուկցիաների լաբորատոր փորձարկումների պլան, որը պետք է ապահովի պայմանագրից բխող ծավալների արտահայտությամբ փորձարկման ենթակա աշխատանքների լաբորատոր փորձարկումների քանակական ցուցանիշները և կազմված լինի՝ համաձայն հրավերի Հավելված 6-ով ներկայացված պայմանագրի Հավելված 1-ով ներկայացված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի «Ծառայության մատուցման հատուկ պահանջներ»-ի 1-ին կետի:

*Հրավերով սահմանվել է, որ հայտը ներկայացնելու և դրան նախորդող 8 տարիների ընթացքում ճարտարագետ-շինարարը պետք է կատարած լինի **նմանատիպ*** առնվազն մեկ օբյեկտի տեխնիկական հսկողություն և/կամ շինարարության իրականացում, ինչպես նաև Վերջին 10 տարիների ընթացքում նշված ոլորտում խորհրդատվական (տեխնիկական հսկողության) ծառայության և/կամ շինարարության իրականացման առնվազն 3 տարվա (գումարային արտահայտությամբ) աշխատանքային փորձ, մինչդեռ՝ առաջարկված ճարտարագետ-շինարարի ինքնակենսագրականում բացակայում է նմանատիպ աշխատանքները և համապատասխան փորձը:

*Հրավերով սահմանվել է, որ ճարտարագետ-էներգետիկը պետք է ունենա հայտը ներկայացնելու և դրան նախորդող 8 տարիների ընթացքում նշված ոլորտում խորհրդատվական (տեխնիկական հսկողության) ծառայության և/կամ շինարարության իրականացման առնվազն 3 տարվա (գումարային արտահայտությամբ) աշխատանքային փորձ, մինչդեռ՝ առաջարկված ճարտարագետ-էներգետիկի ինքնակենսագրականում բացակայում է կատարված աշխատանքների ժամանակագրությունը (տարեթվերը):

*Հրավերով սահմանվել է, որ հայտը ներկայացնելու և դրան նախորդող 10 տարիների ընթացքում ճարտարագետ-հիդրոտեխնիկը պետք է ունենա նշված ոլորտում խորհրդատվական (տեխնիկական հսկողության) ծառայության և/կամ շինարարության իրականացման առնվազն 3 տարվա (գումարային արտահայտությամբ) աշխատանքային փորձ, մինչդեռ՝ հայտով առաջարկված ճարտարագետ-հիդրոտեխնիկի ինքնակենսագրականում բացակայում է համապատասխան փորձի մասին տվյալները:

*Հրավերով սահմանվել է, որ հայտը ներկայացնելու և դրան նախորդող 8 տարիների ընթացքում բնապահպանը պետք է կատարած լինի նշված ոլորտում առնվազն մեկ օբյեկտի տեխնիկական հսկողություն և/կամ շինարարության իրականացում, մինչդեռ՝ հայտով առաջարկված բնապահպանի ինքնակենսագրականի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ վերջինս չի բավարարում հրավերով սահմանված նվազագույն պահանջներին:

* Ձեր կողմից ներկայացված Հավելված N 1.2-ին կից ինքնակենսագրականների ձևաչափերը չեն համապատասխանում հրավերով սահմանված ձևաչափերին: Անհրաժեշտ է առաջարկվող մասնագետների մասով տեղեկատվությունը ներկայացնել հրավերով սահմանված ձևաչափով:

2. Հանձնաժողովը որոշեց.

2.1 Նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով:

2.2 Ծանուցել Մասնակցին շտկել արձանագրված անհամապատասխանությունները, մինչև նիստի կասեցման վերջնաժամկետը՝ **11 սեպտեմբերի 2024թ.** ներառյալ:

2.3 Նիստը շարունակել **12 սեպտեմբերի 2024թ.** ժամը 12:00-ին:

3. Հանձնաժողովը արձանագրեց, որ

3.1 **«ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ-ի** կողմից սահմանված ժամկետում շտկվել են արձանագրված անհամապատասխանությունները:

4. Հանձնաժողովը որոշեց.

4.1 «ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար:

5. Մասնակցին տրված միավորների մասին

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի 2-րդ մասի՝

Որոշվեց՝

5.1 Հաստատել հրավերի նվազագույն պահանջներին բավարարող Մասնակցի կողմից ներկայացված աշխատակազմի փորձառությանը և որակավորմանը, ինչպես նաև ծառայության մատուցման մեթոդաբանությանը տրված միավորները՝ համաձայն աղյուսակի՝

Չափաբաժին 1՝ «ՀՀ Լոռու մարզի Կաթնաղբյուր բնակավայրի կրթահամալիրի կառուցում»» աշխատանքների ընթացքում տեխնիկական հսկողության ծառայություն

Մասնակցի անվանումը	**Աշխատակազմ (ՏԱ1)՝**	**Ծառայության մատուցման մեթոդաբանություն (ՏԱ2)՝**
	Յուրաքանչյուր մասնագետի գնահատման նվազագույն և առավելագույն գնահատականը՝ 10-15 միավոր	**Նվազագույն և առավելագույն գնահատականը՝ 1-40 միավոր**
«ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ	1 Ճարտարագետ-շինարար՝ 10 միավոր	30 միավոր
	1 Ճարտարագետ-էներգետիկ՝ 15 միավոր	
	1 Ճարտարագետ-հիդրոտեխնիկ՝ 11 միավոր	
	1 Բնապահպան՝ 12 միավոր	
Ընդամենը՝ 78 միավոր	**48 միավոր**	**30 միավոր**

Չափաբաժին 3՝ «ՀՀ Սյունիքի մարզի Տեղ համայնքի թիվ 2 կրթահամալիրի կառուցում» աշխատանքների ընթացքում տեխնիկական հսկողության ծառայություն

Մասնակցի անվանումը	Աշխատակազմ (ՏԱ1)՝	Ծառայության մատուցման մեթոդաբանություն (ՏԱ2)՝
	Յուրաքանչյուր մասնագետի գնահատման նվազագույն և առավելագույն գնահատականը՝ 10-15 միավոր	Նվազագույն և առավելագույն գնահատականը՝ 1-40 միավոր
«ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ	1 Ճարտարագետ-շինարար՝ 10 միավոր	30 միավոր
	1 Ճարտարագետ-էներգետիկ՝ 15 միավոր	
	1 Ճարտարագետ-հիդրոտեխնիկ՝ 11 միավոր	
	1 Բնապահպան՝ 12 միավոր	
Ընդամենը՝ 78 միավոր	**48 միավոր**	**30 միավոր**

Հանձնաժողովի կողմից հայտերի գնահատումն իրականացվել է՝ համաձայն Հրավերով սահմանված գնահատման կարգի:

6. Ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցներ/ներ/ որոշելու մասին

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի 2-րդ մասի

Որոշվեց՝

6.1 Հաստատել բավարար գնահատված մասնակցին տրվող գնահատականները, ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների ցանկը՝ համաձայն աղյուսակի՝

Չափաբաժին 1՝ «ՀՀ Լոռու մարզի Կաթնաղբյուր բնակավայրի կրթահամալիրի կառուցում»» աշխատանքների ընթացքում տեխնիկական հսկողության ծառայություն							
Հերթական համարը	Խորհրդատվական ընկերության անվանումը	Աշխատակազմ (ՏԱ1), Ծառայության մատուցման մեթոդաբանություն (ՏԱ2)՝		Մասնակցի առաջարկած գնին տրված միավոր		Ընդհանուր գնահատական	Դասակարգումը ըստ միավորների
		Կշիռը՝ 70%		Կշիռը՝ 30 %			
		Միավոր	(1) x (կշիռ)	Գնահատական*	(3) x (կշիռ)	(2) + (4)	
		(1)	(2)	(3)	(4)		
1	«ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ	78	54.6	100	30.00	84.6	1 Ընտրված

Չափաբաժին 3՝ «ՀՀ Սյունիքի մարզի Տեղ համայնքի թիվ 2 կրթահամալիրի կառուցում» աշխատանքների ընթացքում տեխնիկական հսկողության ծառայություն							
Հերթական համարը	Խորհրդատվական ընկերության անվանումը	Աշխատակազմ (ՏԱ1), Ծառայության մատուցման մեթոդաբանություն (ՏԱ2)՝		Մասնակցի առաջարկած գնին տրված միավոր		Ընդհանուր գնահատական	Դասակարգումը ըստ միավորների
		Կշիռը՝ 70%		Կշիռը՝ 30 %			
		Միավոր	(1) x (կշիռ)	Գնահատական*	(3) x (կշիռ)	(2) + (4)	
		(1)	(2)	(3)	(4)		
1	«ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ	78	54.6	100	30.00	84.6	1 Ընտրված

6.2 Ընթացակարգի մասով ընտրված մասնակից հայտարարել բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ առավելագույն գնահատական ստացած մասնակից՝

1-ին չաբաբաժնի մասով՝ «ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ
3-րդ չաբաբաժնի մասով՝ «ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ

7. Հանձնաժողովը որոշեց.

7.1 Հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշումը՝ համաձայն հավելվածի:

Հանձնաժողովի նիստը նախագահող՝	
Աշոտ Խաչատրյան	
անդամներ՝	
Սամվել Պողոսյան	
Գայանե Քարիմյան	
Անահիտ Թադևոսյան	
Լուսինե Ղազարյան	
Վարդինե Իսահակյան	
Սոնա Կարապետյան	
քարտուղար՝	
Ռոզա Ասատրյան	